ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 476-Ա

12 օգոստոսի 2026 թ.

ԵՐԵՄ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական Երեմ Քարամյանին 2026 թվականի օգոստոսի 13-ին, մեկ օրով, գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Զբոսաշրջության կոմիտեի կողմից՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ, նախաձեռնվող Զբոսաշրջության զարգացման 2026-2030 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված Հայաստանի զբոսաշրջության ոլորտի Ճգնաժամային և ռիսկերի կառավարման ծրագրի (ՃՌԿԾ) մշակման գործընթացի աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840903

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ